Արձանագրություն N 3
ՋԿ-ԳՀԽԾՁԲ-26/7-Տ ծածկագրով ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 07 հուլիսի 2026թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Է. Բաղալյանը,
Հանձնաժողովի անդամներ՝ Կ. Ալեյանը, Կ. Սարգսյանը
Քարտուղար՝ Ս. Գալստյանը

Մասնակից ընկերության կողմից ներկայացված շտկման փաստաթղթերի ուսումնասիրության վերաբերյալ

Ջրային կոմիտեի կարիքների համար «Արփա-Սևան» թիվ 2 թունելի առավել վթարային հատվածների հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման ՋԿ-ԳՀԽԾՁԲ-26/7-Տ ծածկագրով ընթացակարգի մասնակից «ԲԱԲԻՍ» ՍՊԸ-ն, գնահատող հանձնաժողովի 02.07.2026 թվականի թիվ 2 որոշմամբ սահմանված ժամկետում ներկայացրել է պահանջվող փաստաթղթերը՝ հրավերի պահանջներին համապատասխան:

Հանձնաժողովի որոշումը

Ընթացակարգի մասնակցի հայտով ներկայացված (այդ թվում շտկմամբ) փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում, հիմք ընդունելով ՋԿ-ԳՀԽԾՁԲ-26/7-Տ ծածկագրով հրավերի 8.9 և 8.10 կետերը, գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. ՋԿ-ԳՀԽԾՁԲ-26/7-Տ ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «ԲԱԲԻՍ» ՍՊԸ-ին:
2. Հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ ՋԿ-ԳՀԽԾՁԲ-26/7-Տ ծածկագրով ընթացակարգի համար անգործության ժամկետը կիրառելի չէ:

3. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակելուց հետո ծանուցել ՋԿ-ԳՀԽԾՁԲ-26/7-Տ ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից «ԲԱԲԻՍ» ՍՊԸ-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ-0
Գնահատող հանձնաժողովի՝

նախագահ	_____	Է. Բաղալյան
անդամներ	_____	Կ. Ալեյան
	_____	Կ. Սարգսյան
Քարտուղար	_____	Ս. Գալստյան